



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» 2018թ.

N 76-Ն/1


ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱԶԴԱՐԱՐԱՄԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի պահանջները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» որոշման պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

«Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման պահանջն ապահովելու նպատակով՝

1. աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ազդարարման համար պատասխանատուներ նշանակել՝
 - 1) վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ Հայկ Մուրադյանին – խմբի ղեկավար,
 - 2) ներքին աուդիտի բաժնի պետ Սերգեյ Տերտերյանին – խմբի անդամ:
2. Աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնին՝ պատասխանատուների տվյալները և ընդունված ակտը հրապարակել կայքէջում:



Մ. ԹԱՆԴԻԼՅԱՆ